**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/17 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում մարզական համալիրի կառուցման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

30.06.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Զոհրաբյան |
| Անդամներ՝ | Լ. Մելիքյան |
| | Գ. Գևորգյան |
| | Ս. Նունյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մանուչարյան |

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Կ. Հարությունյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտի ուսումնասիրության մասին**

(Ա. Զոհրաբյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է պատասխան գրությունը:

1.2 Գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի** կողմից հայտով չեն ներկայացվել

- աշխատակազմի մասին տվյալները՝ հրավերի Հավելված N 1.2-ը և կից ձևաչափը (CV),
- նախկինում կատարած համանման (նմանատիպ) պայմանագրերի (համաձայնագրերի) պատճենները և դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար հիմնավորող փաստաթղթերը:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Սեյսմշին» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 01.07.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումը ներկայացնելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/17 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

**2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Զոհրաբյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 02.07.2026թ. ժամը 10:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------------ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ ------------------------------------ Լ. Մելիքյան

------------------------------------ Գ. Գևորգյան

------------------------------------ Ս. Նունյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------ Ա. Մանուչարյան